ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-746-18.12.2023-ՏՏԳՇ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-746[1]-18.12.2023-ՏՏԳՇ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-746[2]-18.12.2023-ՏՏԳՇ-011/0) օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ կառավարություն	1. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 12.** 1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	2) Սույն օրենքի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենսգրքի 37.1-ին հոդվածի 13-րդ մասով սահմանված իրավական ակտը սահմանվում է Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:»:		
	2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ - 1-ին հոդվածի 3-րդ կետով լրացվող 1.1-ին և 1.2-րդ մասերի, 5-րդ կետով լրացվող 2.1-ին մասի և 4-րդ հոդվածի 1-ին կետով լրացվող 1.1-ին մասի համարակալումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջին: - 4-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող նոր	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	3-րդ մասում «1.1» ձևակերպումը փոխարինել «1.1-ին» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով:		